ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մարգարյան Միսակ Հովհաննեսի

Լեգիտիմությունը որպես իրավունքի որակական հատկանիշ

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2018

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

Маргарян Мисак Оганесович

Легитимность как качественный признак права

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - "Теория и история государства и права, история государственных и правовых учений"

Ереван - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ. Գ. Պետրոսյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ. Ս. Խաչատրյան**

Առաջատար կազմակերպություն՝ **«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունիսի 23-ին, ժամը 11^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհուրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին փ., 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2018թ. մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների թեկնածու՝ **Ջ. Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена на заседании Ученого совета Института философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г. Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Р. Г. Петросян**
кандидат юридических наук **Г. С. Хачатрян**

Ведущая организация: **Академия образовательного комплекса Полиции РА**

Защита состоится 23 июня 2018г. в 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 23 мая 2018г.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук **Дж. А. Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Իրավաբանական դոկտրինում և իրավակիրառ պրակտիկայում հատուկ սրություն է ստանում լեգիտիմության որպես իրավունքի իրական արտահայտման խնդիրը, քանի որ հենց այս ուղղությունը իրավունքի լեգիտիմության հետազոտման ոլորտում ժամանակակից իրավագիտությունում քիչ է ուսումնասիրված: Տվյալ հանգամանքները անմիջականորեն կապված են անցկացվող բարեփոխումների բնույթի հետ, որոնք արծարծել են երկրի հասարակական կյանքի բոլոր հիմքերը, այդ թվում նաև իրավունքի բնագավառը:

Այսպիսի նշանակալից փոփոխությունների պայմաններում նոր գիտական հայացքների ձևավորման ու երկրում իրավական քաղաքականության և բարեփոխումների զարգացման կարևորագույն ուղղություն է օրինականության որպես իրավունքի իրական արտահայտման գաղափարը: Այս դրույթը հանդիսանում է գիտական, իրավական և այլ հասարակական գործընթացների կայուն զարգացման գործոն:

Հայաստանում իրավական բարեփոխումների գործընթացը չնայած շատ երկարատև չէ, սակայն փորձը ցույց տվեց, որ բարեփոխումների կյանքի կոչելը անհնար է առանց գիտականորեն հիմնավորված օրենսդրության ու դրա արդյունավետ իրացման: Այս առումով, դժվար է սահմանել, թե որն է ավելի կարևոր՝ լավ օրենսդրությունը, թե այն կյանքի կոչելու ձևակերպված համակարգը: Անհարաժեշտ են երկուսն էլ: Լավ օրենսդրությունը, երե նրան չեն հետևում, այն չի կիրառվում, անօգտակար է, ինչպես նաև անօգտակար է անիմաստ նորմատիվ-իրավական ակտերի իրականացման կառուցակարգը (մեխանիզմը):

Դրա հետ կապված՝ լեգիտիմության որպես իրավունքի էության բնութագրական հատկանիշի գիտական ուսումնասիրման անհրաժեշտությունը առավել զգալի է մեզանում իրականացված սահմանադրական բարեփոխումների արդյունքում իրականացվող լայնածավալ օրենսդրական ակտերի ընդունման և գործադրման համատեքստում:

Գտնում ենք, որ իրավունքի էության և արդյունավետ գործադրման հետ կապված հարցերի պարզաբանման համար անհրաածեշտ է նաև իրավունքի լեգիտիմության

հիմնախնդրի ուսումնասիրությունը, որն ունի նշանակալի տեսական և կիրառական նշանակություն:

Հենց վերոհիշյալով է պայմանավորված թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Լեգիտիմությունը որպես իրավունքի էության արտահայտման հատկանիշ, իրավունքի տեսության մեջ բավարար չափով հետազոտված չէ: Սակայն լեգիտիմության գաղափարը հետազոտվել է և՛ իրավագետների, և՛ քաղաքագետների, և՛ փիլիսոփաների կողմից՝ սկսած անտիկ դարաշրջանի մտածողներից (Սոկրատես, Պլատոն, Արիստոտել), միջնադարյան գլոսատորներից (կոմենտատորներից) մինչև նոր և նորագույն ժամանակաշրջանի գիտնականների՝ Մ. Վեբեր, Յու. Հաբերմաս, Հ. Քելզեն, Հ. Հարտ, Լ. Ի. Պետրաժիցկի, Վ. Ս. Ներսեսյանց, Վ. Ե. Չիրկին, Ի. Լ. Չեստնով և այլք:

Հայրենական իրավագիտության մեջ քննարկվող հարցին այս կամ այն կերպ անդրադարձել են Ն. Ա. Ապիյանը, Ռ. Գ. Պետրոսյանը, Գ. Ս. Ղազինյանը, Վ. Վ. Ստեփանյանը, Հ. Մ. Ստեփանյանը, Գ. Ս. Սաֆարյանը, Ա. Գ. Վաղարշյանը և այլք:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշված գիտնականների հետազոտությունները, այնուամենայնիվ գտնում ենք, որ սույն հետազոտությունը լինելով քննարկվող հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրություն, կարող է մասամբ լրացնել հայրենական իրավագիտության մեջ առկա բացը և ճանապարհ հարթել հետագա հետազոտությունների համար:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Որպես ատենախոսական հետազոտության օբյեկտ հանդես է գալիս լեգիտիմությունը որպես իրավունքի բնութագրական հատկանիշ, որը հիմնվում է ժամանակակից լիբերալ-դեմոկրատական իրավահասկացման վրա:

Հետազոտության առարկան պոզիտիվ իրավունքի լեգիտիմության բնույթը, առանձնահատկությունները և պոզիտիվ իրավունքի լեգիտիմության հետ կապված խնդիրների համալիր ուսումնասիրությունն է:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը կայանում է լեգիտիմության որպես իրավունքի էության հատկանիշի բովանդակության

բացահայտումը, որը հիմնված է ժամանակակից լիբերալ-դեմոկրատական իրավահասկացման վրա:

Դրված նպատակին հասնելու համար սահմանվում են հետևյալ հիմնական խնդիրները.

– վերլուծել իրավագիտության մեջ կուտակված գիտելիքները և մոտեցումները իրավունքի լեգիտիմության վերաբերյալ, բացահայտել տվյալ խնդրի համարժեք լուծումները,

– բացահայտել իրավունքի լեգիտիմության՝ որպես իրավունքի էության բնութագրական հատկանիշի բովանդակությունը և առանձնահատկությունները,

– մշակել իրավունքի լեգիտիմության հասկացությունը և դրա ժամանակակից հայեցակարգային մոտեցումը,

– ձևակերպել իրավաօրինակություն հասկացության ընդհանուր տեսական բնութագրիչները,

– արժևորել իրավունքի լեգիտիմության դերն ու նշանակությունը իրավակարգի ամրապնդման և իրավակարգավորումների արդյունավետության ապահովման խնդիրներում:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները. Լեգիտիմության, որպես իրավունքի էության հետազոտության մեթոդաբանական հիմունքներն են. համընդհանուր դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները, ինչպես նաև համակարգային վերլուծության, պատմական, տրամաբանական, ձևական իրավաբանական և կառուցվածքային-ֆունկցիոնալ մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքն են կազմում Ս.Ս. Ալեքսեեվի, Ն.Ա. Ապիյանի, Վ.Ս. Աֆանասեվի, Մ.Ի. Վիտրուկի, Վ.Վ. Գլոշենկոյի, Գ.Ս. Ղազինյանի, Ռ.Գ. Պետրոսյանի, Լ.Ս. Մամուտի, Վ.Ս. Ներսեսյանցի, Վ.Վ. Ստեփանյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Գ.Ս. Սաֆարյանի, Վ.Գ. Վաղարշյանի, Վ.Ե. Չիրկինի, Ի.Լ. Չեստնովի և այլոց աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ-իրավական հիմքն են կազմում ՀՀ փոփոխված Սահմանադրությունը և գործող օրենսդրությունը:

Հետազոտության գիտական նորույթն, ամենից առաջ, նրանում է, որ հեղինակը համակարգված և համալիր վերլուծության է ենթարկել իրավունքի լեգիտիմության,

որպես նրա էությունը բնութագրող հատկանիշի բովանդակային առանձնահատկությունները, որպես ողջ իրավական համակարգի բնականոն գործառնության և իրավունքի սոցիալական հեղինակությունն ապահովվող միջոցի:

Ըստ հեղինակի՝ իրավունքն առանց լեգիտիմության վերածվում է «թղթային կանոնների հավաքածուի», որի օգտակար գործողության գործակիցը իրավակարգավորումների ոլորտում հասնում է չափազանց նվազագույնի կամ առոչնչի: Հետևաբար, իրավունքի լեգիտիմությունը իրավաօրինականության ապահովման և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման երաշխավորն է, ինչպես նաև ընդունվող նորմատիվ իրավական ակտերի որակական չափորոշիչն է և ողջ իրավական համակարգի արդյունավետ գործառնության նախադրյալը: Արժեբանության տեսանկյունից լեգիտիմությունն իրավունքի էական, հիմնային բնութագրիչներից է և իրավակարգավորման միջոցով սոցիալական արդարության հաստատման անհրաժեշտ գործիքակազմ է:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում**.

1. Ընդհանրապես լեգիտիմությունը իրավունքի սուբյեկտների, իրավական համակարգի և հանրային իշխանության գործունեության որակական կողմն է, որն ապահովում է նորմատիվ իրավական ակտերի իրավազորությունը, հեղինակությունը, իրավաօրինականությունը, մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանությունը, անաչառ և արդար դատաքննությունը, իրավական ակտերի որոշակիությունը, իրավակիրառ և դատական որոշումների կանխատեսելիությունը:

2. Իրավունքի լեգիտիմությունը՝ իրավունքի սուբյեկտների (անձի, սոցիալական խմբերի, հասարակության, պետության) կողմից իրավական նորմերի ինքնակամ ընդունումն է՝ որպես օրինական-արդարացի վարքագծի կանոններ, որոնք օբյեկտիվ անհրաժեշտություն են մարդու և հասարակության բնականոն կյանքն ապահովելու համար:

3. Իրավունքի լեգիտիմությունը իրավունքի էության հիմնական հատկանիշներից է և բովանդակային առումով ապահովում է իրավունքի իրավաբանական ուժը (իրավազորությունը), անկասելի և շարունակական գործադրումը՝ սոցիալ-նորմատիվ կարգավորիչների համակարգում:

4. «Լեգիտիմություն» (իրավաօրինականություն) և «լեգալություն» (օրինականություն) եզրույթները հարակից, սակայն նույնական չեն, դրանք տարբեր իրավական կատեգորիաներ են, որոնք փոխկապված են միմյանց հետ: Աշխատանքում հիմնավորվում է հեղինակային հայեցակարգը՝ լեգիտիմության և լեգալության վերաբերյալ. լեգիտիմությունը մարմնավորում է իրավունքի իդեալական առումը (իրավական որոշակիությունը, անհակասականությունը, իրավական բացերի անթույլատրելիությունը և այլն), իսկ լեգալությունն արտահայտում է պոզիտիվ իրավունքի փաստացի իրականությունը՝ դրական և բացասական կողմերով հանդերձ, ինչպես նաև վերջինս (լեգալության) համապատասխանությունը լեգիտիմ օրինականությանը (իրավաօրինականությանը): Լեգիտիմությունը խթանում է իրավունքի համակարգում դրական փոփոխությունները (բարեփոխումները), իսկ լեգալությունը կոչված է ապահովելու պոզիտիվ (գործող) իրավունքի կայունությունը, հաստատակամությունը և անփոփոխությունը: Բացի դրանից, լեգալությունը (օրինականությունը) իրավունքին լեգիտիմություն հաղորդելու եղանակներից մեկն է, այսինքն՝ իրավունքի (օրենքի) լեգիտիմացիայի միջոց է:

5. Լեգիտիմացիան իրավունքին պաշտոնական կարգավիճակի տրամադրողն է: Այն չի հանդիսանում անփոփոխ երևույթ, սոցիալական էվոլյուցիայի գործընթացում տեղի է ունենում շարժառիթների ու արժեքների աստիճանական փոփոխում, որոնք լեգիտիմացնում են դրական իրավունքը: Նախապետական կազմավորումներում սկզբնապես գերիշխում էր առասպելաբանական գիտակցությունը, ապա այն փոխարինվում է կրոնական-մետաֆիզիկականով, որին համապատասխանում են ստրկատիրական, ֆեոդալական իրավական համակարգերը ու վերջապես տեղի է ունենում իրավունքի ռացիոնալ մեկնաբանությանը և անցում է կատարվում մոդեռնի շրջանում: Բայց անգամ նախապետական վիճակում կանոններին հետևելը, որոնք հետագայում սկսել են ձևավորել իրավունքը, պայմանավորվել են ոչ միայն սանկցիաներով, այլև կրոնական հեղինակությամբ: Պետական իշխանության ստաջացումից հետո իրավունքի նորմերը երկար ժամանակ հիմնավորվում են սրբազան շարժառիթներով և միայն 17-18-րդ դդ տեղի է ունենում կրոնական աշխարհայացքից դեպի աշխարհիկ իրավագիտության անցում ու սկսում է ձևավորվել պոզիտիվ իրավունքի լեգիտիմության ժամանակակից բանական (ռացիոնալ) տիպը,

որը հիմնվում է համընդհանուր սկզբունքների և իրավադրույթների վրա:

6. Նոր և նորագույն ժամանակներում քաղաքական ինստիտուտների ձևավորման համար ժողովրդավարական սկզբունքների սահմանումը առաջացնում է ավանդական լեգիտիմության կազմաքանդում: Իրավունքի հանդեպ վերաբերմունքը նոր ժամանակներում դառնում է գիտակցված, պոզիտիվ իրավունքը գիտակցվում է որպես մարդկային սահմանումներ, այլ ոչ թե որպես անփոփոխ աստվածային կամ կրոնական կանոն: Դրա համար էլ ժամանակակից պոզիտիվ իրավունքը կարիք ունի հիմնավորման ու ճանաչման հասարակության կողմից (սոցիալական լեգիտիմություն) ու միայն հարկադրականությունը քիչ է նրա գործադրման և պահպանման համար:

7. Լեգիտիմ օրինականությունը (իրավաօրինականությունը) խթանում է իրավական համակարգում պոզիտիվացնել միայն իրավունքի օբյեկտիվ հատկանիշները (ձևական հավասարությունը, ազատությունը, արդարությունը, հումանիզմը), սկզբունքները և համապատասխանաբար ընդունել միայն իրավական բնույթի նորմատիվ իրավական ակտեր:

Լեգալությունը (օրինականությունը) կոչված է ապահովել պոզիտիվ իրավունքի (օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, դատական նախադեպերի և իրավական դիրքորոշումների, կորպորատիվ նորմերի, կարգադրագրերի) անշեղ պահպանումը և կատարումը:

8. Իրավակարգավորումների մեխանիզմում լեգիտիմ օրինականությունն ապահովում է նրա համակարգվածությունը, կազմակերպչական և գործառնական առումները, այս իմաստով՝ լեգիտիմ օրինականությունն ապահովում է նաև իրավունքի որակական հատկանիշներից մեկը՝ վերջինիս լեգիտիմությունը, իրավազորությունը և սոցիալական հեղինակությունը:

Հետևաբար, կարելի է պնդել, որ լեգիտիմ օրինականությունը ոչ միայն իրավունքի անբաժան հատկանիշն է, այլև ողջ իրավական համակարգում հանդես է գալիս որպես համընդհանուր, համապարտադիր, իմպերատիվ սկզբունք, որն անխզելիորեն կապված է իրավունքի ծագմանմ ձևավորման, էվոլյուցիոն զարգացման հետ:

9. Պոզիտիվ իրավունքի լեգիտիմացիայի պատմական զարգացման վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավունքի լեգիտիմությունը ժամանակակից հասարակության օբյեկտիվ անհրաժեշտություն է: Անհրաժեշտ է նաև

հիմնավորում սկզբունքների միջոցով, որոնք կիսում և ղեկավարվում է հասարակությունը: Ժամանակակից հասարակությանը բնորոշ է հավատ իրավունքի հանդեպ, պատշաճ իրավական ընթացակարգերին հետևում, որոնք անհրաժեշտ են իրավունքի լեգիտիմության համար: Դրա համար էլ ժամանակակից իրավունքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ իրավունքը չի կարող լեգիտիմացվել գաղափարաբանության միջոցով: Ժամանակակից իրավունքի լեգիտիմությունը ի տարբերություն ավանդական իրավունքի, կապված է իրավաբանական հավասարության ու ազատության հետ:

10. Իրավունքի տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում պոզիտիվ իրավունքը լեգիտիմացվում է բնական իրավունքի միջոցով, իսկ դրա հետ կապված իրավունքի էությունը պոզիտիվիզմի շրջանակներում դիտարկվում է որպես բնական ու պոզիտիվ իրավունքի միասնական ամբողջություն: Բնական իրավունքը, որով լեգիտիմացվում է գործող պոզիտիվ իրավունքը, լուսավորության դարաշրջանի մետաֆիզիկական գաղափարաբանության պոզիտիվ իրավունքի կանոնների հիմնավորում է, որոշ անփոփոխ սկզբերի մասին հիմնադրույթ է օբյեկտիվ իրականության և իրավական պահանջմունքների բավարարման համար և որոնց դիրքերից կարելի է գնահատել պոզիտիվ իրավունքի լեգիտիմությունը և արժեքային հատկանիշները:

Հետազոտության տեսական - գիտական նշանակությունը նրանում է, որ ստացված արդյունքները (տեսական դրույթները, հետևությունները, եզրահանգումները) որոշակիորեն կխորացնեն մեր գիտելիքները իրավունքի տեսության ոլորտում և կարող են հիմք հանդիսանալ հետագա ուսումնասիրողների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը նրանում է, որ ատենախոսական աշխատանքում ձևակերպված դրույթները և գործնական բնույթի առաջարկությունները կարող են օգտագործվել իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացներում, ինչպես նաև ուսումնական դասընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը. Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ

իրականացվել է աշխատանքի քննարկումը և գրախոսությունը:

Աշխատանքի կառուցվածքը. Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ինը ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածական մասում հիմնավորվում է թեմայի հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Լեգիտիմության հասկացությունը և հիմնական հայեցակարգային մոտեցումներն իրավունքի տեսության մեջ»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Լեգիտիմության հասկացությունը և բնութագրական հատկանիշները»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել լեգիտիմության հիմնական հատկանիշների էությունը և բնութագրական առանձնահատկությունները:

Լեգիտիմությունն իշխանության և պոզիտիվ իրավունքի կարևորագույն բնութագրիչներից է: Լեգիտիմությունը սույն ատենախոսական աշխատանքի մեջ մեկնաբանվում է որպես քաղաքական կամ իրավական ինստիտուտների հասարակական ճանաչում: Լեգիտիմությունը դրսևորվում է համալիր կերպով նորմերի հանդեպ վստահությամբ, իրավունքների օրենսդրական հաստատմամբ, իշխանության իրավական ենթակայությամբ, գաղափարաբանական թափանցիկությամբ, իր վրա վերցված պարտականությունների կատարմամբ:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Լեգիտիմության մեթոդաբանական տեսանկյունները»** վերնագրով, հեղինակը քննարկում է իրավունքի տեսության առումով լեգիտիմության մեթոդաբանական ասպեկտները:

Հետազոտելով պոզիտիվ իրավունքի լեգիտիմության խնդիրները, դիտարկելով լեգիտիմությունը որպես նրա բնութագրական հատկանիշ, անհրաժեշտ է անդրադառնալ մեթոդաբանական խնդիրներին: Աշխատանքում հիմնավորվում է այն

մոտեցումը, որ լեգիտիմության և ընդհանրապես, ցանկացած իրավական երևույթի համակողմանի ուսումնասիրման համար անհրաժեշտ է օգտագործել մեթոդաբանական բազմազանությունը և բազմակարծությունը, որոնց շնորհիվ հնարավոր է բացահայտել լեգիտիմության էությունը, բովանդակությունը, առանձնահատկությունը և սոցիալական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **«Լեգիտիմության կատեգորիայի ժամանակակից մեկնությունները»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել լեգիտիմության կատեգորիայի ժամանակակից հայեցակարգային մոտեցումները, տեսական և պրակտիկ մեկնությունները (արդարության, արդյունավետ կառավարման և իրավակարգավորման, իրավական հավասարության ու ազատության, պոզիտիվիստական, բնական-բանական և այլն):

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Լեգիտիմությունը որպես պոզիտիվ իրավունքի էության բնութագրիչ»** վերնագրով, բաղկացած է երեք ենթագլխից:

Աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Լեգիտիմությունը որպես պոզիտիվ իրավունքի էական հատկանիշ»** վերնագրով, հեղինակը բացահայտում է պոզիտիվ իրավունքի էական հատկանիշներից մեկի՝ լեգիտիմության էությունը և բովանդակությունը: Լեգիտիմության շնորհիվ պոզիտիվ իրավունքը ձեռք է բերում սոցիալական հեղինակություն և բարձրացնում է իրավակարգավորումների արդյունավետությունը, ապահովում իշխանության բնականոն գործունեությունը և հասարակության առաջընթաց զարգացում, պայմաններ է ստեղծում տնտեսության զարգացմանը և անձի սոցիալական պաշտպանվածությանը, ապահովում անձի, հասարակության և պետության իրավական անվտանգությունը:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի լեգիտիմության հիմնախնդիրն իրավահասկացության տարբեր տիպերում»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն լուսաբանում է իրավահասկացության տարբեր հայեցակարգերում, տիպերում, մոտեցումներում լեգիտիմության ըմբռնման առանձնահատկությունները և հեղինակային մեկնաբանությունները:

Ըստ հեղինակի՝ իրավունքի լեգիտիմության հիմնախնդիրը լիարժեք բացահայտվում է միայն իրավահասկացության իրավաբանական-ազատական

մեկնության դիրքերից, որից բխում է նաև իրավաօրինականություն բովանդակալից հասկացությունը, ըստ որի՝ հասարակությունում իրավաօրինականության ռեժիմի ապահովումը հնարավոր է բացառապես իրավական օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի գործողության պայմաններում:

Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի լեգիտիմության հիմնախնդիրը ժամանակակից սոցիումում»** վերնագրով քննարկվում է իրավունքի լեգիտիմության դերն ու նշանակությունը ժամանակակից հասարակական կյանքում:

Ժամանակակից սոցիումում իրավունքի լեգիտիմության հատկանիշը ստանում է հատուկ նշանակություն, որը կապված է իրավական իրականության մարդկային չափումների հետ: Իրավունքն առկա է որպես մարդկանց վարքագծի չափման կանոններ, որոնք սոցիալականացվում են համապատասխան իրավական մշակույթի մեջ: Լեգիտիմացիան իրավական իրականության անընդմեջ վերարտադրության մեխանիզմ է, որով ապահովվում է սոցիումի կայունությունը և նրա անցնցում զարգացումը:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Իրավունքի և իրավական նորմերի լեգիտիմության հիմնախնդիրը ժամանակակից հասարակությունում»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Աշխատանքի երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Իրավունքի լեգիտիմության բնույթը»** վերնագրով, հեղինակը բացահայտում է իրավունքի բնույթը, նրա առարկայական բովանդակությունը: Աշխատանքում հեղինակն իրավունքի լեգիտիմությունը (իրավաօրինականությունը) տարբերում է իրավունքի լեգալությունից (օրինականությունից): Երկուսն էլ իրավունքի անքակտելի հատկանիշներն են՝ միայն այն տարբերությամբ, որ իրավունքի լեգիտիմությունը բացահայտում է իրավունքի ներքին էությունը, նրա «իրավական բնույթը», իրավունքի արժեքային բովանդակությունը, մինչդեռ իրավունքի լեգալությունը բացահայտում է պոզիտիվ իրավունքի արտաքին բնութագրական հատկանիշները՝ պատշաճ օրենսդրական ընթացակարգ, օրենսդրական (իրավաբանական) տեխնիկայի կանոնների խստիվ ապահովում, հրապարակայնությունը (հասարակական իրազեկումը) և այլն:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավական նորմերի լեգիտիմության հիմնախնդիրը հասարակության զարգացման արդի**

պայմաններում» վերնագրով, հեղինակը համակողմանի վերլուծության է ենթարկում իրավական նորմերի լեգիտիմության հետ կապված հարցերը ժամանակակից հասարակական զարգացումների պայմաններում: Սույն ենթագլխում հիմնավորվում է այն մոտեցումը, որ միայն լեգիտիմ իրավական նորմերի գործողության շնորհիվ կարելի է հասնել առաջադիմության, կայունության և շոշափելի արդյունքների:

Աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Հասարակության իրավականացումը (յուրիդիֆիկացիան) և իրավունքի լեգիտիմություն»** վերնագրով, լուսաբանվում է հասարակության իրավականացումը (հասարակական հարաբերությունների խելամիտ կանոնակարգը) և իրավունքի լեգիտիմության դերն ու նշանակությունն այդ գործընթացում, քանի որ հասարակության իրավականացումը պետք է տեղի ունենա բացառապես լեգիտիմ օրենքների և լեգիտիվ իրավական նորմերի միջոցով, այլ ոչ թե կամայական «իրավական» ակտերով:

Ատենախոսության ընթացքում կատարված հետազոտական աշխատանքների արդյունքում հեղինակը հանգել է հետևյալ հետևությունների և եզրակացությունների.

1. Ատենախոսական աշխատանքում հետազոտվել է իրավունքի լեգիտիմություն կատեգորիան իրավական ոլորտում որպես իրավագիտական հասկացություն: Լեգիտիմությունը թույլ է տալիս բացահայտել պոզիտիվ իրավունքի բնույթը: Տվյալ հետազոտության նպատակը լեգիտիմության բացահայտումն է որպես դրական իրավունքի էության բնութագրական հատկանիշ է: Կատարված հետազոտության արդյունքում կարելի է առաջարկել հետևյալ սահմանումը. լեգիտիմությունը իրավաբանական տերմին է, որը կիրառվում է պոզիտիվ իրավունքի, բնութագրման համար, որն ունի հեղինակություն, որի ուժով նա թելադրում է պարտադիր պահանջներ ու սահմանում է վարքագծի օրինակներ: Իրավական կարգի լեգիտիմությունը, որը կապում է այն մարդկանց համար փաստացի վարքագծի հետ:

2. Լեգիտիմությունը բնորոշում է պոզիտիվ իրավունքի էությունը, լեգիտիմության միջոցով այն բացահայտվում է որպես գործող ինստիտուտ այս կամ այն հանրույթում: Լեգիտիմությունը նման չէ օրինականությանը (լեգալությունը), որը բնութագրում է իրավունքի օբյեկտիվ ֆորմալ-իրավաբանական կողմերը և հանդիսանում է իշխանական

հրահանգավորումների պետությունից եկող լեգիտիմացիայի տարատեսակներից մեկը: Դրա հետ կապված՝ անհրաժեշտ է տարբերակել պոզիտիվ իրավունքի լեգիտիմություն ու լեգալություն եզրույթները, քանի որ իրավագետների կողմից այս կատեգորիաների միախառնումը առաջացնում է լեգիտիմության ու օրինականության միախառնում:

3. Ժամանակակից հասարակությունում չի կարելի լեգիտիմացնել իրավունքը՝ փաստարկելով նրանում արտաժամանակային սկզբունքների առկայությամբ: Դա կապված է այն բանի հետ, որ որոշակի արժեքներ, որոնք ընկած են իրավունքի հիմքում, որոնք ընդունվում են մի խումբ քաղաքացիների կողմից, կարող են լինել նաև ոչ լեգիտիմ այլ սոցիալական խմբերի համար: Եթե ընդունում ենք ժամանակակից պլյուրալիզմը, պետք է հրաժարվենք կյանքի բացառիկ կերպարի հանդեպ դասական փիլիսոփայական հավակնությունից:

4. Իրավական օրինականությունը (լեգիտիմությունը) որպես իրավունքի որակական հատկանիշ և համընդհանուր սկզբունք, կոչված է ապահովելու ողջ իրավական համակարգը և իրավական պրակտիկան: Հետևաբար, լեգիտիմ օրինականությունը հասարակության իրավական կյանքում ստեղծում է իրավականության գործնական պրակտիկա, որում գերիշխում են ազատությունը, իրավաբանական հավասարությունը, սոցիալական արդարությունը, հումանիզմը, պատասխանատվությունը: Այդ իրավականության համակարգում քաղաքացիները պաշտպանված են հանրային իշխանության կամայականություններից, իսկ հասարակությունը՝ իրավական նիհիլիզմից, ամենաթողությունից, քաոսից, անօրինականություններից:

5. Լեգիտիմությունը բնորոշում է պոզիտիվ իրավունքի էությունը (բնույթը): Իրավական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրավունքի ճանաչումը այն բանի հիմնական պատճառն է, որ իրավաբանական կանոնները սկսում են կարգավորել հասարակության կյանքը: Իրավահասկացման մարքսիստական կամ մատերիալիստական տիպի շրջանակներում լեգիտիմության հարցերի ուսումնասիրությունը հնարավոր չէ: Հասկացությունների յուրիսպրուդենցիայի սահմաններից դուրս գալը հնարավորություն է տալիս հետազոտել իրավունքի լեգիտիմության բնույթը, լեգտիմության ու լեգիտիմացիայի առանձնահատկությունները ժամանակակից հասարակության պայմաններում: Երբեմն ժամանակակից հասարակության բնութագրման համար կիրառվում է մեկ այլ եզրույթ՝ ուշ մոդեռնի

հասարակություն: Այս եզրույթը ավելի ընդունելի է, քան պոստմոդեռնի կատեգորիան, քանի որ ժամանակակից հասարակությունը պահպանում է շատ արժեքներ, որոնք բնորոշ են մոդեռնին:

6. Կապված վերոնշյալի հետ՝ անհրաժեշտ է ժամանակակից իրավունքի փիլիսոփայության կիրառությունը այլ իրավափիլիսոփայական պարադիգմայով: Բանը նրանում է, որ վերջին երեք հարյուրամյակներին փիլիսոփայությունը մի քանի անգամ փոխել է այն բանի մասին հասկացումը, թե ինչն է արժանահավատ գիտելիքի հիմքը, ըստ Հաբերմասի փիլիսոփայության զարգացման պատմության մեջ առանձնանում են երեք պարադիգմաներ՝ կեցության, գիտակցության, լեզուների: Փիլիսոփայությունը դիտարկում էր մեր գիտելիքը որպես կեցության արտացոլում, կեցության այսպիսի պարադիգմային վերաբերում է Մարքսի փիլիսոփայությունը, որը մարդկության պատմությունը կապում է աշխատանքի հետ, որը մինչև վերջերս գերիշխում էր դասական իրավագիտության մեջ: Արդյունքում սկսում է գերիշխել գիտակցության պարադիգման, որը դիտարկում է գիտելիքը որպես արդյունք, որը ձևավորվել է մարդու տրանսցենդենտալ գիտակցությամբ և պետք է ընկած լինի ժամանակակից իրավունքի փիլիսոփայության համակարգում:

7. Լեգիտիմության վերլուծության ժամանակ և իրավունքի ինտեգրալ տեսության տեսանկյան պայմաններում պարզ է դառնում, որ սուբյեկտների համար նշանակալից արժեքները կարող են փոխվել կոմունիկատիվ փոխազդեցության գործընթացում: Ռացիոնալության կոմունիկատիվ տեսության առումով նորմի լեգիտիմության չափանիշ է նրա համապատասխանությունը կոմունիկատիվ ռացիոնալությանը, այսինքն, երբ նրանք արժանանում են ազատ ճանաչման իրավական հանրույթի յուրաքանչյուր անդամի կողմից: Դրա համար էլ բոլոր իրավական նորմերը չեն կարող հասկացվել ժամանակակից հասարակությունում որպես անփոփոխ, նրանք պետք է հիմնավորվեն պատշաճ իրավական ընթացակարգերում: Դրա համար էլ պոզիտիվ իրավունքի արդյունավետ գործադրման ապահովման համար ժամանակակից հասարակության պայմաններում անհրաժեշտ է նրա լեգիտիմության հիմնավորումը, քանի որ միայն այդ միջոցով է հնարավոր ապահովել իրավակարգավորումների արդյունավետությունը և իրավաօրինականության ամրապնդումը ժամանակակից հասարակությունում:

8. Ժամանակակից լեգիտիվ օրինականությունը՝ որպես իրավունքի հիմնական

որակական հատկանիշ և իրավական կարգավորումների համընդհանուր կազմակերպական-գործառութային սկզբունք, իրենից ներկայացնում է հասարակությունում իրավականության հաստատման գործիքակազմ և նախապայման, որի հիմնական բաղադրատարրերն են՝ լեգալությունը, օրինականության ռեժիմը, իրավական ակտերի աստիճանակարգումը, իրավական որոշակիությունը:

9. Կատարված հետազոտության արդյունքում անհրաժեշտ է կատարել եզրակացություն, որ լեգիտիմ օրինականությունը քաղաքացիական հասարակության կյանքի կազմակերպման այնպիսի իրավական կատեգորիա է, որի դեպքում, առաջին հերթին, ապահովվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, անձի կեցության արժանապատվությունը, քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամի սոցիալական ու իրավական կարգավիճակի պոզիտիվ զարգացումը, իրավունքի գերակայությունը և իրավական որոշումների կանխատեսելիությունը:

10. Վերջում՝ գործնական բնույթի առաջարկություն. լեգիտիմ օրինականությունը՝ որպես համընդհանուր սկզբունք, ամրագրել հետևյալ սահմանադրական օրենքներում. դատական օրենսգրքում, ընտրական օրենսգրքում, Ազգային ժողովի կանոնակարգ, Սահմանադրական դատարանի մասին, Կուսակցությունների մասին օրենքում և Մարդու իրավունքների մասին սահմանադրական օրենքներում, ինչպես նաև ճյուղային օրենսդրության նյութական և դատավարական օրենսգրքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

ա) Մենագրություններ

1. Լեգիտիմության ժամանակակից մեկնությունները: Եվրոպրինտ, Երևան, 2017, 52 էջ:

2. Լեգիտիմությունը որպես պոզիտիվ իրավունքի բնութագրական հատկանիշ: Եվրոպրինտ, Երևան, 2017, 48 էջ:

3. Իրավունքի և իրավական լեգիտիմության հիմնախնդիրներն արդի պայմաններում: Եվրոպրինտ, Երևան, 2017, 48 էջ:

4. Լեգիտիմությունն իրավունքի որակական բնութագրական հատկանիշ:

Եվրոպրինտ, Երևան, 2017, 112 էջ, 42 էջ:

5. Լեգիտիմության տեսական և մեթոդաբանական ասպեկտները: Եվրոպրինտ, Երևան, 2017, 42 էջ:

6. Իրավունքի լեգիտիմության բնույթը ժողովրդավարական և իրավական հասարակությունում: Եվրոպրինտ, Երևան, 2018, 68 էջ:

բ) Գիտական հոդվածներ

1. Իրավունքի լեգիտիմության հիմնախնդիրները ժամանակակից սոցիումում // Արդարադատություն, N 3/44, 2018, էջ 26-28:

2. Լեգիտիմությունը որպես պոզիտիվ իրավունքի բնութագրական հատկանիշ // «Նորավանք. 21-րդ դար», 2018, 2 (78), էջ 109-115:

Резюме

Маргарян Мисак Оганесович

Легитимность как качественный признак права

Актуальность диссертационного исследования обусловлена коренными социально - политическими и правовыми изменениями в Республике Армения. Кроме того, актуальность темы исследования обуловлена также тем обстоятельством, что категория «легитимность» малоисследованна в юриспруденции, несмотря на то, что «легитимность» является одной из важнейших характеристик, как власти, так и позитивного права. Легитимность традиционно в социологической, политологической и юридической литературе трактуется как общественное признание политических или правовых институтов. В этом смысле в настоящей работе утверждается, что легитимность очень сложное и многоаспектное политико - правовое явление и проявляется комлексно: в доверии к правовым предписаниям, в законодательном подтверждении прав и в правовой подотчетности власти.

В данной диссертационной работе легитимность исследуется в юридическом аспекте, анализируются различные подходы к легитимности права, об особенности легитимности позитивного права в условиях современного армянского государства и общества.

В диссертационной работе исследуется особенность легитимности позитивного права в настоящее время, ее природа и проблемы легитимности современного позитивного права.

В работе предлагается разработка проблемы легитимности права, как фактора эффективности позитивного права в национальной правовой системе, а также рассматривается проблематика легитимности права, как качественный признак позитивного права, как явления, служащего индикатором

универсальности позитивного права, как необходимое условие человеческого общежития.

Научная новизна данной диссертации выражается в том, что на общетеоретическом уровне обстоятельно изучаются проблемы и основне концептуально - теоретические подходы к выявлению сущности легитимности права, показывается роль и значение легитимности в правовом регулировании общественных отношений, в национальной правовой системе.

В авторском подходе легитимность права проявляется из правовой потребности гражданского общества и эффективного правового регулирования общественных отношений.

Кроме того, в данной диссертации подробно рассматриваются основные признаки, характеризующие легитимности права.

Теоретическая значимость диссертации заключается в том, что сформулированные в нем теоретические положения и выводы развивают и дополняют наши знания о легитимности права, являются методологически исходными положениями юриспруденции.

Материалы диссертации способствуют дальнейшей разработке концептуальных основ теории легитимности права, его места и роли в правовой системе общества.

Практическая значимость работы заключается в том, что содержащиеся в работе рекомендации могут найти практическое применение в правотворческой, право применительной и правоохранительной деятельности.

Материалы исследования могут быть использованы сотрудниками правоохранительных и правоприменительных органов, в учебном процессе по общей теории права, политологии и другим отраслевым дисциплинам.

Rezume

Margaryan Misak Oganes

Legitimacy as a qualitative attribute of law

The relevance of the dissertation research is conditioned by the fundamental socio - political and legal changes in the Republic of Armenia. In addition, the relevance of the topic of research is also due to the fact that the category of "legitimacy" is poorly researched in jurisprudence, despite the fact that "legitimacy" is one of the most important characteristics, both of authority and positive law. Traditionally legitimacy in the sociological, political and legal literature is interpreted as public recognition of political or legal institutions. In this sense, the present work affirms that legitimacy is a very complex and multidimensional political and legal phenomenon and manifests itself in a complex: in trusting to legal prescriptions, in legislative confirmation of rights and in legal accountability of the authorities.

In this thesis legitimacy is examined in a legal aspect, different approaches to the legitimacy of the law, the peculiarities of the legitimacy of the positive law in the conditions of the modern Armenian state and society are analyzed.

In this dissertation, the peculiarity of the legitimacy of positive law at the present time, its nature and the problems of the legitimacy of modern positive law are being explored.

The paper suggests the development of the problem of the legitimacy of law as a factor of the effectiveness of positive law in the national legal system, and also discusses the problem of the legitimacy of law as a qualitative sign of positive law as a phenomenon that serves as an indicator of the universality of positive law as a necessary condition for human dignity.

The scientific novelty of this dissertation is expressed in, that on the general theoretical level, the problems and foundations of conceptual and theoretical

approaches to revealing the essence of the legitimacy of law are thoroughly studied, the role and significance of legitimacy in the legal regulation of social relations, in the national legal system is shown.

In the author's approach, the legitimacy of law manifests itself from the legal needs of civil society and the effective legal regulation of public relations.

In addition, in this dissertation, the main features characterizing the legitimacy of law are examined in detail.

The theoretical significance of the thesis lies in the fact that the theoretical propositions and conclusions formulated in it, develop and supplement our knowledge of the legitimacy of law, are methodologically the starting points of jurisprudence.

The materials of the thesis contribute to the further development of the conceptual foundations of the theory of the legitimacy of law, its place and role in the legal system of society.

The practical importance of the work lies in the fact that the recommendations contained in the work can find practical application in law-making, law-enforcement and law-enforcement activities.

The research materials can be used by law enforcement and law enforcement officers, in the uebnogo process on the general theory of law, political science and other branch disciplines.